



ԴԻՐ-Ն ԶԲԻ-Ն ԲԴՆ



Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Գ Ի Ս Ա Ր Ա Ն

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՈՒՐ ԳԱՂԹԵԼ

“ UBI BENE, IBI PATRIA ”



ԱՅՐԵՆԻ պատմութեան մէջ անպակաս են աւրինոտ էջեր. և 1605ի Զուգայի գաղթականութեան զէպքը՝ ամենէն սրտաճնկիկն է. Հին Զուգան մատնուած էր ամէն տեսակ բռտմանի տեսարանաց. հալածանք, աքսոր կ'որոտան կը սպանան տեղացոց զիտուն. Պարսիկ սուրբ անդթարար կը ներգործէ. Զուգայի Հայք կարող չեն զիմազրել թշնամուոյն գոծիային զօրութեան. պէտք է տարածերթեալ գնալ զէպ ի օտար աշխարհ, մտերացաշտից բնագաւան. հարստութիւնն կը թաղեն զեանի տակ. կը գոցեն եկեղեցիներու դռները, կը զիգուին Աստուածածնայ եկեղեցոյ առջև,

ու խոր խոցուած կ'աղերտն. « Բեզ կը յանձնենք, սիլ Սուրբ Կոյս, մեր տաճարներու և տներու բանալիները. զու զմեզ օտարութեանէն՝ մեր հայրենիքը դարձուր ». և բանալիները Երասի գետի հեծող ու մնչող ալեաց տալով, կը հեռանան. անոնց ետեւէն կը հասնի հրդեհեալ հայրենի տաճարաց և տնակաց ծուկն ու մտիկը. և այդ տխուր ամպերուն միջէն կ'որոտայ ձայն մը .

« Մասիսի անունն, Նոյայ տաղանին, Արարատ գաշտի սուրբ Էջմիածնի, Մեր Խոր վերապի, սուրբ Գեղարբ, Մուղնի, Չմուսնան մինչ ի օրն զստատանի »:

Այս սիրուն ու զգայուն պատուէր Ստեփան վարդապետը կու տար իր թշուառ հօտին որ զէպ ի Պարսկաստան կը հայածուէր. Եւ արդեօք այդ մի և նոյն պատուէր նուիրական զարձած չ'է այն ամէն Հայուն համար, որուն ճակատագիրն է գաղթել իր բնիկ երկրէն. Օտար աշխարհը մեզ համար այնքան դառն չըլլար, երբ հայրենիքի բարցը յիշատակները և անոր ամենէն կենսական աւանդները, Կրօնքը և Պատմութիւնը զուրպուրալով սեղմենք մեր կուրծքին վրայ:

Մեր ազգին ճակատագիրն է գաղթականութիւնը. իր ծագումէն մինչև ներկայիս,

հայր միշտ զազլթող եղած է, և զազլթակա-
նութիւնը այն ատեն վնասեց Հայուն ազ-
գայնութեան, երբ հնուացաւ իր զրացի ազգե-
րէն, և ընկաւ իբրև աննշան կաթիլ մը երու-
պակիան ժողովրդեան ուղիքանին մէջ. և զար-
ձեալ այն ատեն նոյն իսկ զրացի գաւառաց
մէջ՝ շլատուեցաւ իր ազգայնութեան ողին,
երբ նոյն գաւառները մի քիչ ասիական թմբի-
րէն սթափեցան ու շփուեցան Եւրոպոյ զի-
ւանազիտական շարժման հետ: Հայը իր գա-
րաւոր պատմութեամբ ցոյց տուած է որ ահա-
ն աննշան տերութեան մէջ կարող է լաւ
ապրիլ, յառաջագիմել և սոսկեղ իր ազգայ-
նութիւնը:

*

Հայուն զազլթականութեան զլիւսաւոր պատ-
ճառք են, նախ հարածանք և ազքատութիւն,
երկրորդ՝ շահատիրութիւն և զիւրակեցութիւն:
Հայաստանի զրացի ազգերն Հայոց տսկուն
և հանճարեղ գործունէութենէն ուզելով օգ-
տուիլ, շարունակ մերայինները բանակով ի-
րենց աննշակ երկիրներու մէջ կը ցրուէին.
և այն նահատակ ու անզօր ժողովուրդը՝ ստի-
պուած էր չի զիմազրել տարազրութեան.
սոր, հուր և ամէն տեսակ ստաղանք իրեն
կը սպառնային: Երբ Գ և Գ զարերու միջեւ,
խցեցաւ Հայոց և Պարսից բարեկամութեան
կապը և ծնունդ առին և զօրացան կրօնա-
կան երկպառակութիւնը, Հայը հեթանոս
ազգաց մէջ միակ քրիստոնէայ ազգն մնաց
և զրացի ազգաց մոլիտանութիւնը զինքը
սկսաւ անխնայ հարածել. իսկ հայը ինքնու-
րոյն կարող չէր զիմազրել: Հոռոմաց բարե-
կամութիւնը, ազգիս փոխանակ օգտելու վնա-
սեց, վասն զի այդ բարեկամութիւնը կեղծ
ու խարդախ էր: Եւ այն զարբերէն սկսեալ մին-
չեւ վերջ, հայը հեթանոսաց և Հոռոմ խու-
ժանին հարուածոց զիմազրեց իր խաշով և
սրով. ու պարտութեան ատեններն իմայն
զլուի ծոց տարազրութեան, ուսկից թէեւ
աւելրիչ և աւարտու խուժանն շատ օգուտ
ներ տեսաւ, բայց մեր ազգութիւնը շատ
տուժեց:

Սասանեանց Եւպոլոհ Բի և Յազիբրա
Բի օրերով, ի բարգաւաճումն Արեաց, Բագ-

արխացոց, Պարթեւաց, Խուժ և Խորասան
նահանգաց, բանակներով հայեր Հայաստա-
նէն կը տարազրուէին: Պարսից անխնայ հա-
րուածներուն կը յաջորդէ Արաբացոց հրո-
սակը: Եւ հաստակ հայրենիքը՝ անանց մի քիչ
շունչ աննկու, կ'իյնայ ասոնց սրոյ տակ:
Եթովնորդ զարը ազգիս պատմութեան մէջ
իրական եղբերգութեանց տեսարաններ ցոյց
կու տայ: Արաբացոց խաղիքաները բորբո-
քած էին աշխարհակալութեան սիրով. ա-
նոնք կը նուաճեն Սասանեան վերջին թա-
գաւորը Յազիբրա Գ, և կը զիմեն Հայաս-
տանի վրայ: Ազգիս պաշտպան համարուած
Յոյնը, նոյն պարագային փոխանակ իր
պաշտպանութիւնը ցոյց տալու, կը կծկի իր
կեանքին մէջ: Խաղիքաներու նպատակն էր
մեր ազգը իրենց հպատակ ընել, ուստի
ամէն ջանք կ'ընեն ջնջելու ազգիս իշխա-
նազուն ցեղը, սրոց մի մասն գերութեան և
միւս մասն սրոյ զոհ կ'ըլլան: Օմարի օրով,
Ալպոսահման զօրախորի առաջնորդութեամբ
18,000 արաբացիք, Հայոց արեամբ ներ-
կուած զրօշով՝ Սարեստանէն կը խուժեն ի
Տարան (640). Մամիկոնեան Տիրացայ խըմ-
բած 8000 մարտիկները քաջութեամբ կը
պատերազմին թշնամոյն ահեղ բանակին
հետ, սակայն վերջապէս հայրենեաց հա-
մար կը նահատակուին. ազգաբաւ Սա-
հու Անձեւացին կ'աջակցի Ալպոսահմանի,
որ իւր կատորածները շարունակելով, կը
հասնի ի Գուէն և 35,000 անձ գերի վեր-
ցընելով ի միտսին կը տանի և զանոնք կը
ցրուէ յԱսորիս, յԱրարիս, յԵղիպատս և ի
Պաղեստին: Հայոց համար ինչ բունի և աը-
խուր զազլթականութիւն էր: Ազգիս եկե-
ղեցոյ հին հովուապետք գուրգուրալով ի-
րենց հօտին կրօնական պարտոց վրայ, նոյն
իսկ զազլթականները անանց հազեւոր հովուի
չէին թողար: Գրիգոր Վկայասը այդ զազլթ-
ներուն մէջ կը հաստատէ եպիսկոպոսներ և
եկեղեցական պաշտօնեաներ, սրոնք վստ կը
պահեն իրենց հօտին կրօնական և ազգային
ողին, անոնք՝ սրոնք թէ և հեռի ի Հայրե-
նեաց, բայց մօտ կ'ըլլան Ազգայնութեան:

Բիւզանդիան ազգիս երկրորդ հայրենիքն
կ'ըլլայ. վաճառաշահ և խաղաղասեր հայու-

թիւնը, տեանելով իր աշխարհի հարստահա-
րութիւնը, Գ զարէն մինչև ՃԱ զար՝ շարու-
նակաբար կը խուժէ ի Բիւզանդիոնս՝ Հոռո-
մոց աշխարհը ազդիս հնարամիտ և վաճա-
ռական ձիրքէն շատ կ'օգուտի:

Հայ գաղթականութիւնը չի կզդիացաւ
միայն ի Բիւզանդիոնս, այլ տարածուեցաւ
Կ. Պոլսէն Թրակիա, Թեսաղիայէն Մակե-
դոնիա և Պուլղարիա, Կիպրոսէն Հոպոս,
Կրետէն մինչև Ալբերկանի փոսնըը՝ ի
Վենետիկ և Իտալիոյ միւս վաճառաշահ քա-
ղաքները: Հայաստանի վրայ թաթարաց ար-
շակաւորներու շնորհիւ, նոյնպէս բազմաթիւ
Հայեր կը գաղթեն Թաթարաց աշխարհը՝
Վուլիոյ գետի մօտ, աստի՛ իրիմ, Թէոզու-
սիայէն Մուրտաիա, Լեհաստան, և Ռու-
մանիա. և Պարսկաստանէն Հնդկաստան:
Հայք ուր որ գաղթեն՝ հոն ցոյց կու տան
իրենց իշխող պետին պարտ ու պատշաճ
յարգանքը, թիկունք պատերազմական գաշտի
վրայ և հասարակաց բարոյն սատարութիւն.
Կը ծաղկեցընեն ճարտարարուեստը, վաճա-
ռականութիւնը, երկրագործութիւնը:



Խաւար պարերու և աննշան ու յետամնաց
ազգաց մէջ, հին հայ գաղութը կը պարծէր
իր բնատուր գեղեցիկ ձիրքերով, որոնք ու-
շագրաւ կ'ըլլային այն ամէն տէրութեանց,
սրոնց հպատակ էին: Հայ գաղութը իր մեծ
վաճառականներով օգտակար եղաւ Պարսկին.
բաջարի և անձնանուր օրորովքներով Ռու-
սին. Ամիրաներով՝ Թուրքին: Մեր պատ-
մութեան անցեալ շրջանին՝ հայութեան ար-
ժանաւոր անդամները, պետական մարմիններ
կը կազմէին, որոնց կայծերը ներկայիս Ծա-
հերու արքունեաց մէջ կը պլզդան: Անոնք
ազգայնութեան վրայ ունէին իրենց բարոյա-
կան և նրութեական մեծ թիկունքը, սրոնց
նուագութիւնը յայտնի էր, որ ազդիս հա-
մար միթիթարական չէր:

Մեր ազգը թէ և թափառականութեամբ և
գաղթականութեամբ բնու չորոշուիր ի Հրէից,
սակայն այդ սրամիտ ազգին բազաբակա-
նութեան չի կրցաւ հետեւիլ. ներկայիս
հրէայն անանց սրոշ գրականութեան, լոկ

իր հրէական դաւանութեամբ, աշխարհիս ա-
մէն կողմ իր հրէութիւնը պահելով, կը բար-
գաւաճի և կը բազմանայ. Եւրոպիոյ ամէն ու-
սումնական կաճառներու մէջ անպակաս են
մի քանի առաջնակարգ հրէայ բանիբուն
անդամներ. իրանագլխտական և պաշտօնա-
կան մարմնոց մէջ անոնք մեծ ձայն և ազ-
դեցութիւն ունին. Եւրոպիոյ ամենէն մեծ
վաճառականութիւնը իրենց մենաշնորհն է,
և որով արդ կան ու կը բազմանան միլիո-
նատէր հրէայ վաճառականներ: Մերք ցոյց
տուինք անպաշտօնա հարածուած և հասա-
րակաց հակակիր մի ժողովուրդ, որ հսկա-
յարալլ յառաջ կ'ընթանայ՝ նիթմալէս և
մտաւորապէս: Հին Հայութիւնն ալ Հրէից
այս նախանձելի վիճակէն հեռի չէր: Հայ
գաղութը իր հայրենիքէն տարազրուած ատեն
բնու իր սրտէն չէր հալածար ազգայնութեան
գաղափարը և երբ, որ ցաւալի է բռնի թէ
մեր արդի գաղութներու մէջ գրեթէ աննշաճ-
րելի են: Եւ մեր բաժնին ճշմարտութիւնը
գուցէ օրինակներով աւելի շօշափելի ըլլայ:

Հին գաղութը սր որ գաղութը, հակառակ
սեղացուց յարուցած գոտարութեանց, կը
լանար և կը յաջողէր՝ Ս. Աստուածածին
կամ Ս. Կարապետ եկեղեցի մը կանգնել.
վարժարան մը և ապարան մը հաստատել, լոկ
ազգայնութիւնը պահելու և պահպանելու հա-
մար: Հին Պուլղայեցի Լազարեան ազգա-
տոհմը հազիւ թէ Սպահան կը գաղթէ, հոն
շուտով կը յառաջանայ, կը լինի ազգապետ,
փողերանոցի և արքունի գանձարանի ստի-
կան: Անտի կը գաղթէ Մոսկուա. սրամիտ
ազգատոհմը, հոս եւս իր վաճառականական
կարողութեամբ մեծ գումար կը զիզէ. և մե-
տաբի գործարաններ հաստատելով, այնքան
կը հարստանայ, որ կարող կ'ըլլայ Աթմեր-
խանի, նոր Նախիջևանի, Գլղարի և ուրիշ
տեղեր բնակող հայ հասարակութեանց շատ
կերպով օնկելու: Մոսկուայի և Փեթրպուրիկի
մէջ եկեղեցիներ կը հաստատէ, և իրեն
անուամբ կը կանգնէ համբաւուար արեւե-
լեան լեզուաց ուսուցման Լազարեան ճեմա-
րանը, որսն մի առ մի օգուտները յիշեն
աւելորդ կը համարինը, բանի որ հասարա-
կաց ծախթ թէ: Պարսկաստանէն հայ գա-

գումբը հազիւ թէ Հնդկաստանի մէջ ոտից
 պաղար կը գտնէ, կ'աշխատէ իր ճարպիկու-
 թեամբ տեղւոյն կառավարութեան հասնելի և
 ճամբակերէ ըլլալ: Հնդկահայը Կալիպոնայի,
 Մատարաի, Սուրաթի, Սէլյապատի մէջ և
 այլուր՝ քաղաքական և ղինուորական մեծ
 ազդեցութիւն կ'ունենայ: Իր վաճառաշա-
 հութեան կարողութիւնը ի գործ դնելով,
 շատ կը հարստանայ: Չիչբայի մէջ 1695ին
 կը կանդնէ Հայ եկեղեցի մը: Կալիպոնայի
 հայ գաղութը շատով կը յառաջագիտէ. այն
 կ'ունենայ Ս. Նազարէթ եկեղեցի մը, աղ-
 քատ հայ պանդոկոսներուն համար յատուկ
 հիւրանոց մը: Մարդասիրական ձեռնարան
 մը, ուր Մեքսիկո թագուհեանի խմբագրու-
 թեամբ կը հրատարակուի «Ազգասեր» թերթը
 (1845—1852), բայց ասիկց հառաջ հնդկա-
 հայք սկսած կ'ն աղղկն հրատարակել ի
 Մատարա հայ լրագրութեան անդրանիկ «Ազ-
 գարար» թերթը (1794—1796), որուն խմբ-
 քարիւն կը Տ. Յարութիւն քահանայ Շմա-
 տնեան: Հնդկահայ Մամուկ Մուրատ և Ռա-
 փայէլ Ղարամբան՝ իրենց ծախքով և Մխի-
 թարեանց ձեռքը (ի Փատուա, յետոյ ի Փա-
 ըրիզ) ի Վենետիկ վարժարաններ բանալ կու
 տան, ուր սկիզբէն մինչեւ ցարբ աղղային
 աղքատները ձրի՝ իսկ հարուստները թոշա-
 կով կրթուած են և կը կրթուին. ներկայիս
 այդ երկու բարերարաց օժախը, Մխիթա-
 րեանը 30 թուով աշակերտ կը խնամեն իտալ
 Համալսարանաց, բարձրագոյն վարժարա-
 նաց մէջ. և Ռափայէլեան վարժարանի մէջ՝
 կը կրթին 72 աշակերտ՝ որոց 50ը բար-
 ուովին ձրի է և աշակերտաց մեծ մասը լու-
 սաւորչական հայ: Հնդկահայ բարերարաց
 գործը շատ մեծ էր, և արդիւնաւոր ալ եղաւ.
 անոնց նման ազգս ունեցաւ ուրիշ բարե-
 րարներ, բայց միթէ նուիրատուները՝ իրենց
 ակնկալած արդիւնքն մագիւղեցին: Հնդկա-
 հայը իրեն առաջին նախանձելի փառաց մէջ
 շատ երկար չէ տեսնց. այն օրէն որ Հնդկաս-
 տանի մէջ շահամու անգղիացցին հաստա-
 տուեցաւ, Հնդկահայը թէ նիւթապէս և թէ
 ազգայնութեամբ տուժեց. անգղիացցին իր վա-
 ճառաշահութեան աշխարհակույ ճիւղանները
 ստարածց. տկարացաւ Հնդկահայը և մի

մասն ալ սկսաւ գաղթել ի Հոլանտա և այդ
 գաղութին մէջ Գեորգ Մանուկեան և Յով-
 սէփ Ամիրխան՝ այնքան հարստութիւն զիգած
 են, որ նոյն իսկ Հոլանտիոյ տէրութեան
 ստակ փոխ աուեր են:

Յունաց զարգացեալ միջնադարին մէջ գաղ-
 թական հայը անցելոյն մէջ շատ փառաւոր
 վարկ մը կ'ունենայ: Բելգիանդներ կայսե-
 րական գահէ վրայ Յուստինիանուսէ վերջը
 տասնըչորս հայ իշխաններ կը նստին և երկու
 պար կը կառավարեն ժողովուրդը: Ռուսա-
 նահայքը՝ գաղթականութեան առաջին ժամա-
 նակներն, տարնջական վայրին մէջ քաղա-
 քական ազդեցութիւն մը կ'ունենան, ուժ
 կու տան ազգային եկեղեցւոյ պաշտպանու-
 թեան, խնամը կը տանին ազգային պատ-
 մութեան, և մանկախն իբրեւ բնիկ հայաս-
 տանցիներ կը կրթին յատուկ նորակառոյց
 ազգային վարժարանաց մէջ: Բայց ներկայիս
 անոնց ազգայնական հոգին տխուր վիճակ
 մ'ունի. և ինչպէս որ թրքահայ լրագիրները
 կը զրեն, անոնց ազգայնական հոգին այլ
 եւս պաղկեր է. Կ. Պոլսոյ պատրիարքարանը
 այն գաղութին մէջ հաստատեց հոգեւորա-
 կան իշխանութիւն մը, որ չկարողացաւ
 վառ պահել ազգային լեզուն և պատմու-
 թիւնը. որուն որչափ ալ նպաստաւոր չէր
 ու չէ տեղացի կառավարութիւնը, սակայն
 ազգային գաղութն իսկ, այժմ անհոյ է իր
 լեզուին և զլորութեան պաշտպան լինելու:
 Թրանսիլլուանիոյ գաղթական հայերը, նոյն-
 պէս իրենց վաճառաշահութեան ամենայնաշու-
 դակ յատուկութեամբ, գումարներ կը զիղեն.
 տեղացի իշխանութիւնը այդ սիրելի հայ գաղ-
 թականութեան ամէն ազատութիւն կու տայ.
 և անոնք իրենց աշխրջութեամբ օտար տէ-
 րութեան մէջ բնիկ հայրենիք մը կը կաղ-
 մեն ու կը շինեն Հայաքաղաք և Պաշտպալ
 քաղաքները. իրենք կը վարեն անոնց բա-
 րաբակ կան իշխանութիւնը: Բայց ներկայիս
 նոյնպէս Թրանսիլլուանիոյ ազգայինները կու
 բուսած են իրենց ազգայնութիւնը. անոնց մէջ
 հազիւ կարելի է մի բանի ձեռունի և տարբե-
 անձինք գտնել, որ կարող լինին երկու եւ
 ընթ ազաւազեալ բառերով հայերէն խօսել:
 Մեր ազգը պատմական գեղեցիկով նշանաւոր

գաղութ մ'ալ ունեցաւ Լեհաստանի մէջ . կամենիցի եւ Իլլովի հայութիւնը ունեցած է իրեն առանձին հայազգի բազաբազուրը , որ 12 հայ գաղտարոններով հաստատուի մա- զովորակ գառները : Լեհաստանի մէջ եր- թալով հայ գաղթականութիւնը անտեսական եւ քաղաքական լաւ բարգաւաճումն կ'ունե- նայ , վարժարաններ , եկեղեցիներ կը շէ- նուին , եւ մերայիներ իրենց աշխատակեր եւ ճարտիկ յատկութեամբ , լեհ պետերուն սերն եւ համակրանքը կը վայելեն : Խաղաղութեան վերահաստ կ'ըլլայ տխուր բարդական փո- լորիկ մը . հակառակ հայ գաղութի կամաց , Միլիթանի կ'ազգիկալը Նիկոլ Թորոտովիչ անուն եկեղեցական մը՝ Իլլովի եպիսկոպոս կը ձեռնադրէ , յաղտրեան եւ նորընծայ ե- պիսկոպոսին միջեւ ամենատխուր կրօնական երկպառակութիւն մը կը ծագի . կնիկըրը եր- թալով կը զայրանայ ի վնաս յաղտրեան գեղեցիկ կազմակերպութեան . վերջապէս յո- զովորըրը անտի ուրիշ տեղեր կը գաղթէ , եւ Իլլովի մէջ հազիւ 100 տուն հայ բնակիչ կը մնան , որոնք վերջը կը հաշտուին Նիկոլ եպիսկոպոսին հետ . բայց քանի որ գլտու- թեան ծագած հարուածը մեծ էր , Լեհացի հայ գաղութը մեծ կորուստ կ'ունենայ , եւ կը ձուլուի օտար ազգաց հետ :

Մեր գաղութը ամենուրեք ուրախալի ծա- զում մը կ'ունենայ , բայց միշտ անմիթար եւ տխուր վերջ մը :

Առանց նկարագրելու թուրք եւ Ռուս հայ գաղութներու անցեալ եւ ներկայ անտեսա- կան եւ բարոյական վիճակը որ հանրութեան ծանօթ է , կ'անցնինք համառօտ կերպով շօ- շափելու մեր արտասահմանի գաղթականու- թեան ներկայ կացութիւնը :



Խաղաղասեր Հայութիւնը վերջերս ստի- պուեցաւ անընդհատ խուժել , գաղթել ար- տասահմանի զանազան կողմերը : Թողոց իր զարեւոր հայրենիքը , օտարութեան մէջ ու- զեց գտնել իր բարեբը եւ հոն՝ ուր բարեբ գտաւ , այն իր հայրենիքն եղաւ . *Ubi bene ibi Patria!* Եղիպտոսի , Պուլխարիոյ , եւ Ա- մերիկոյ մէջ ունեցանք նոր ստուար գաղ-

թականութիւն . որոնց ամենուն վիճակը ազ- զային տեսակէտով հաւասարապէս նախա- ձեռն չէ : Եղիպտոսի եւ Ամերիկոյ հայ գա- զութը այնքան վեժմնողիք չըլլալով իր ազ- զային կրօնքին եւ դպրութեան , զբալի կեր- պով կը նուազի հայ տարրը եւ կը ձու- լուի օտարին մէջ . մինչդեռ Պուլխարիոյ մէջ , ներկայ հայ գաղութը օտար երկնքի ներքեւ կ'ապրի իբրեւ բուն եւ բնիկ հայրենեաց մէջ , կ'աճի՝ ազգայնութեան մասին (ոչ մոլեռանդ) պահպանողական զիրք մը բունելով : Ինչպէս Եգիպտոսէայն , նոյնպէս նաեւ Ամերիկոյ հա- յութիւնը , չկարողացաւ Պուլխարիոյ ազգայ- նոց հետեւել : Ներկայիս Ամերիկոյ եւ Եգիպ- տոսի հայ գաղութը կը պարծի իր միլիո- նատէր ջոյներով , ուսից զուրկ է Պուլխա- րոսէայը . բայց շատ անկէ գերազանցել է միջակ կամ աղքատ հարազատ հայ մը , քան հայ հոգիէն անանկացած , հայ անուանեալ ընչեղ ջոյ մը : Ամերիկոյ մէջ կը բազմանան հարուստ հայեր , նոյն իսկ միլիոնատէրներ , բայց գաղթականութեան մեծ մասը կը կորնչի , ցան ու ցիբ կը փոխ նոյն ընդարձակ աշ- խարհի աննշան կողմերը , ուր չի լինելով ազգային անձնանուէր հոգեկան հովիւներ , եւ մտաւորական առաջնորդներ , հայրենի գտա- նուէրներ կու կ'երթան նորագանդից զօրեղ եւ ազուլ պատանափոխութեան . եւ շատ դժուա- րին էր որ այրպիսի մի միջավայրի մէջ , ուր պատանափոխութեան համար ամէն տեսակ զիւրի միջոցներ անպակաս են , կարողանար միամիտ եւ սովալուի հայութիւնը իր նախ- նեաց կրօնքին եւ վարդապետութեան փարե- լով , պահպանել իր ազգայնութեան հոգին ու կրակը , առանց որչի՛ հայը Հայաստանի մէջ կ'ապրի , բայց օտարութեան մէջ մտած ան- զամ մը կը համարուի : Հայ հոգեւորակա- նութիւնը եթէ ներելի է բսել , այնքան ուժ եւ ներգործութիւն չունեցաւ դիմադրելու այդ ազգակործան հոսանքին : Հայրենիքի մէջ անուս եւ ազդմասբալ եկեղեցական միամիտ պաշտօնեայ մը , կարող է հաւասարմութեամբ հսկել իր հօտին վրայ , բայց մի եւ նոյն կամ նոյն եւ նման հոգեւոր պաշտօնեայ մը , կա- րող չէ օտարութեան մէջ նորազանդ ուսեալ պատուելիներու քարոզութեան դժ մարտիկ

և պատասխանատու լինել իր հօտին հայրենաւանդ կրօնի ամբաստինդ պահպանութեան : Բաց աստի, կարեւոր է որ ամէն ամերիկահայ զազում, անհրաժեշտ ունենայ իր ազգային տարրական և միջին վարժարանը, ուր ազգին լեզուով և պատմութեամբ կրթութիւն հայ մանկարին : զիտնալով ակն յայտնի ճշմարտութիւնը, որ օտարազգի վարժարանները՝ ազգային շէնքին տապալարդներն են : Երեսուր է ըսել որ տեսած ենք Ամերիկահայ անձեր, որոնք ազգային լեզուով խօսելու համար, համբի մը չտի կը շարձարուէին :

Այդ պազութիւն համար՝ ինչպէս քաջ հոգեւորական պաշտօնեաներ, նոյնպէս նաեւ վարժարաններ և հասարակաց ընթերցարաններ անհրաժեշտ կը տեսնուին : անոնց զործին մեծ սատար պիտի ըլլան նոյնպէս անզացի հայ լեզրիները, եթէ այլ եւս ի սեր ազգութեան վերջացրեն միմանց զէմ մը զուած հրատապ և երկարատեւ կուտակցական ապարդիւն պայքարները : նոյն լեզրիներու համար ուրիշ շատ կարեւոր խնդիրներ պահաւ չեն : անոնք կարող են զազմականութեան ազգային հօդույ լրէժնիկը ըլլալ, լուրջ դատաւոր հանդիսանալով կղերի և հարուստ դասակարգի պարտականութեան մասին : կղերը միջնով անձնանուէր զործունէութեան, իսկ հարուստ ջոկերու գութը հրաւիրելով ազգային ազգատաց և հասարակաց կրթութեան կարեւոր հաստատութեանց վրայ :

Ի բաց անկազ դաւանափոխութեան հօտանքը, միւս ամէն մասամբ Եղիպտահայը, Ամերիկայ ազգայնաց վիճակին մէջն է : Տեղացի զազմականութեան ազգային ուղու պահպանութեան համար, նոյն մեծ պարբը կը ծանրանայ թէ անտարբեր հարուստներուն և թէ երկու հրատարակուած լեզրիներու վրայ :

Այնքնելով Պուլկարահայ զազմականութեան, անոնց ներկայ կայքը մեզ միւլիմարութիւն կը ներշնչէ : անոնք ազգային գրականութեան ուստարութեան և յաւանալիմութեան համար, բոլորովին հօդի ու խանդ ցոյց կուտան : Թիշ Ժամանակուան մէջ Պուլկարահայ նոր պազութիւն լաւ կազմաւորութիւն մ'ունենցաւ : կանգնեց իրեն յատուկ ազգային եկեղեցի, ունեցաւ վարժարաններ, սպարաններ,

գրալաճարներ, ընթերցարաններ, և լրագրներ : « Որբունի » լեզրի խառն, խմբագրութեան նոյն զազութիւն հասաւ հինգ հարիւրէն աւելի նամակ, որոնց մէջ որոշ կը կարգացուէր իրենց ազգային կիրք, զգայուն, անկեղծ և սիրուն սէրը : այդ նամակներէն հատկացուեցաւ որ թրքահայը մանաւանդ Պուլսոյ հայութիւնը (ուսիկը կազմուած է Պուլկարահայ զազութի մեծ մասը) արտասահմանի մէջ եթէ իրեն զարգացման նպատակար՝ միջավայր մը գտնէ, շուտով և զիրատ բարեկերու նախանձելի բարեւոյժն կը կրէ և դեռ աւելի՛ ազգային սիրով կը խանդաւափ : աւելի սէր, խանդաղատանք ցոյց կուտայ իր ազգին հետուր և մերձուր խեղճերու, ազգատներու, կարօտեալներու վրայ : հօն Կ : Պոլսեցիին մասամբ մը՝ կը շափաւորէ իր հօտհոտական հոտութիւնը : Պուլկարահայ զազութիւնը ազգայնական տեսակետով իր լաւ և անվտանգ կացութիւնը մասամբ իւրից կը պարտի ստոյնական վայրին և սոցացի ազգային լեզրիներու :

Հին ուր չի կայ բազաքական և դրական կաշիանդում, ճշուում, հօն ուր չկայ կրօնական երկպառակութիւնը, մանաւանդ յայտնի և զազմիկ պաւանափոխութեան հօտանք մը, — Հին գաղթիւնը :

Հայը շուտով կը յառաջանայ, ազգային հողին աւելի կ'արձարծի : և Պալքանական աշխարհը այդպիսի երկիր մ'ըլլալով, հայը ցոյց տուաւ զընտանի բարեշրջումն և յառաջալիմութիւն, և նոյնը տեսնուած է նաեւ մեր հին զազմականութեանց մէջ : Ինչպէս յօգուածին վերայիշեալ տաղերուն մէջ տեսանք, որ մեր զազութիւնը նախ զեղեցիկ սկիզբ մ'ունեցեր է, որ շնորհիւ դիւանադրական և կրօնական փափուկ խնդիրներու, տխուր վախճանի յանգրէն է : Պուլկարիկ այդ զիբքին աշակցեր է հայ մամուլը : մի միայն վաւանայի մէջ հայ զազութիւն ունի շուր լեզրի, « Իրաւունք », « Հայեցի », « Ծաւիկ » և « Ծարձում », և մէնն ալ՝ ողջամիտ պահպանողական դիբք մ'ունին : « Հայեցի » երկիւծաբան գրութեամբ անկազար կ'ուզէ հայ բարբերու վաստակարները, նորածին « Ծաւիկ » ժողովրդեան յարմար գրական և ազգային նիւթեր կը մա-

տակարարէ. «Շարժում»ը «Մշակ» թերթի հոգով լայն կը տեսնէ, իր մէջ անպակաս են զեղեցիկ առաջնորդող յօդուածներ. «Իւրաւունք»ը լուրջ լրագրի օգտակար ուղղութիւն մ'ունի և աւելի խաղաղ յօդադրական. այս վերջին երկու թերթերն՝ Թրքահայ, Ռուսահայ և Պարսկահայ հասարակութեանց մասին, շատ անգամ շահեկան և ուշադրութեամբ լի թղթակցութիւններ և ազգային բռնիկներ ալ կը հրատարակեն: Ընթերցողն որչ կը տեսնէ, որ այսպիսի ուղղութիւն մը ունեցող թերթեր հաւանական է որ հայ գաղութին վրայ շատ լաւ ազդեցութիւն կրնան թողուլ:

Մեր այսքան ի մէջ բերած օրինակներէն զիւրին է եզրակացընել թէ հայ գաղութը ուր աւելի կարող է պահել իր ազգութիւնը, և ինչ կերպով և միջոցներով կրնայ հաստատուիմալ իր Հայ անուն:

Երբ ճակատագիրը հայուն վրայ կը ծանրանայ, կը ստիպէ թողուլ իր ծննդավայրը, գաղթել, աստանդական, թափառական կենցաղ մը վարել: Գաղթականութեան պատմութիւնը օրինակ թող լինի, որ հայը մասնաւոր ուր նա սակաւութիւն է, կարող չէ ապրիլ մեծ պետութեան մը մէջ, և չի ձուլուիլ անոր հետ. հայը կարող չէ հայ մնալ ուր գաւառաբնակութիւնը ազգու կերպով ի գործ կը գրուի: Հայը կեանք կ'անուս, կը գարգանայ նիւթապէս և բարոյապէս, եթէ գարգանայ նիւթապէս կրօնական և բարոյական կաշկանդումէ զերծ համեստ տէրութեան մը մէջ. հոն իր հայկական տաճարը և մամուլը կը մոխրաբեր կը կազմուի զիւրեք և մոռցընել չեն տար հայրենեաց ամենէն բարձր յիշատակները, խոր վերապը, նուիրական Սարը, Շառաբշանի վարդերը, և զիւրազնեբարձ Պուլպուլը:

Եւ այդ ամենով Հայը Հայ է ամէն տեղ:

Հ. Ս. ԵՐԵՎԱՆ



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ՏԵՍՈՒԹԻՒՆ Ս. ԵՓՐԵՄԻ

ԿՏԱԿԻ ՎԱԽԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ԱՍՈՐԱԿԱՆ եկեղեցին է մին ի հնագոյն եկեղեցեաց, որոյ մէջ փայլեր են թէ պէտեւ գուցէ սակաւութիւն, բայց մեծ համաճարք, յոր առաջնակարգ կրնանք համարել զճգնազգեաց Սուրբն Եփրեմ խորին աւտորին, մեր մասնապրութեան մէջ ծանօթագոյն իր գրուածոց սոկեղէն թարգմանութեամբ: Այլ իր այդ գրուածոց մէջ կայ տալաւածանօթ կէտ մը. Սրբոյ վերջին կտակէն, որ թէպէտ իբրեւ կաթիլ մը ի գույլ է, սակայն վերջինն է զեղեցիկ ու գեղացուն, ինչպէս վերջին կաթիլ ամանային բաղջը անձրեւին որ կ'իջնէ ու կը թափի նորաթիթի ծաղկան վրայ:

Ահաւասիկ հետեւեալն է Սրբոյն Եփրեմի կենսազրաց մեղի աւանդածն՝ այդ կենսաբուրն աղբիւրէն ելած վերջին սիրոյ կաթիլն կամ կտակին վրայ, և անոր համառոտութիւնը:

Ս. Եփրեմ Եփեսոյ սոթի ատեն աղբասները կերակրելն ետքը կը գտնայ իր խղիկը և մէկ ամէն կը հիւանդանայ: Սուրբն կը զգայ իր սուր և շնչոյ սպառիլն, կը զգայ որ այլ ես քանի մը օր հաղիւ ունի աշխարհէն վրայ օթիլու, վասն զի իր կենաց լալտաբեր առկայծեր է, կը կանչէ հաւատարիմ և ձեռատուն աշակերտքը՝ անոնց իր վերջին ուղղոյն տալու: Այդ մահադոյ լուրը վայրկեանէ վայրկեան արձագանդի մը պէս կրկնուելով կը տարածուի ամբողջ քաղաքին մէջ. Եղեռացիք հաղիւ իրենց հացը գտած՝ այժմ հաց սուտը կը կորսնցընեն. ամէնքը խուսն բազմութեամբ կը զիմն հոն՝ ուր որ